ԲԱՑՎԵՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍՐԱՀԸ

Փետրվարի 7-ին սկսեց գործել Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու մոմավառության նոր ընդարձակ սրահը՝ կառուցված Հայ Եկեղեցու մեծազնիվ բարերար Լուիզ Սիմոն Մանուկյանի բարերարությամբ: Մոմավառության սրահի ճարտարապետն է հոգելույս Ստեփան Քյուրքչյանը:

Մոմավառության նոր սրահի բացումը կատարվեց ձեռամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանի: Սրբազան Հոր գլխավորած խաչվառազարդ թափորը Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուց ուղղվեց դեպի մոմավառության սրահ, ուր ժապավենի հատումից հետո կատարվեց նորակառույց սրահի օրհնության կարգը:

«Այս սրահը երկար տարիներ սպասված մի իրողություն էր: Պատահական չէ, որ կատարեցինք նորակերտ բնակարանի օրհնության կարգ: Իր տեսակի մեջ մոմավառության սրահը ևս բնակարան է, որն ունի իր բնակիչները՝ այն հավատացյալ անձերը, ովքեր մշտապես պիտի այցելեն և ամեն մի վառվող մոմի հետ իրենց աղոթքներն ու իղձերն առաքեն Աստծուն:

...Այս մոմավառության սրահը երկակի առաքելություններն է գալիս նորոգելու մեր հոգիներից ներս. լուսավորություն, որ յուրաքանչյուրս կոչված ենք լինելու լույսի որդիները, և երկրորդ գաղափարը՝ նահատակության, ինքնազոհության գաղափարը, որ յուրաքանչյուրս պարտավոր ենք զոհաբերվելու այն առաքելության համար, որին կոչում է մեզ Տերը»,- ասաց Արշակ Սրբազանն իր խոսքում:

Սրբազան Հայրը նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնություններն ու գնահատանքը փոխանցեց եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Անուշավան վարդապետ Ժամկոչյանին ու բարեջան շինարարներին՝ ցուցաբերած նախանձախնդրության ու ջանասիրության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ